

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ <<ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ>> ՎԵՊԻ <<ՀԱՌԱՋԱԲԱՆԻ>>  
ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 9-րդ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

# Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպ «Հառաջաբան»

## Մուտք

Հայ գրականության մեջ շատ չեն այն գրողները, որոնք ունեն գործունեության լայն ասպարեզ: Նրանցից է Խաչատուր Աբովյանը՝ վիպասան, մանկավարժ, բանաստեղծ, առակագիր, դպրոցական գրքի հեղինակ: Հայաստանի վերքի երգիչը, մեծ քանաքեռցին, մեծ մանկավարժը, լուսավորիչ-դեմոկրատը, հայ նոր գրականության հիմնադիրը՝ Խաչատուր Աբովյանը, Արարատ բարձրանալուց բացի դիմել է մեկ այլ խիզախության ևս: Նա 1841թ-ին գրեց «Վերք Հայաստանի» վեպը, որը լույս տեսավ մահից տասը տարի անց՝ 1858թ-ին, որից հետո Րաֆֆին «Սալբի» վեպի լեզուն փոխեց աշխարհաբարի, իսկ Պ. Պռոշյանը գրեց «Սոս և Վարդիթերը», որոնց մասին հետո Մ. Նալբանդյանը պիտի գրեր, որ այդ գրքերը ճշմարտացի են արտացոլել իրականությունը և նախանշել հայ գրականության զարգացման ուղին: Նա իր վեպին ռոմանտիկների նման կցեց «Հառաջաբան», ինչպես հետո Րաֆֆին «Սամվել» վեպին, Հյուգոն՝ «Էռնանի» դրամային:

9-րդ դասարանում ուսուցանվում է «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»: Ստորև ներկայացնում ենք դասի պլան:

### «Հառաջաբան»-ում

- առանձնացնել առաջադրված խնդիրները
- ընտրովի ընթերցանությամբ կներկայացնենք այդ խնդիրները ներկայացնող հատվածները կպատմենք Աբովյանի կյանքից մի քանի դրվագներ
- կբացահայտենք այն զգացումները և զգացմունքները, որոնցով տոգորված է «Հառաջաբանը»
- կբնութագրենք Աբովյանին՝ որպես հայրենասերի
- կպարզաբանենք լեզվաոճական մի քանի խնդիրներ

**Դասի կահավորումը՝** Սահիկահանդես՝ նվիրված Խ.Աբովյանին, հատված «Հյուսիսային ծիածան» կինոնկարից

**Մեթոդները՝** ԽԻԿ, Մտագրոհ, Քարտեզագրում, Հեղինակի աթոռ, Քարտային աշխատանք

**Դասի նպատակը՝**

Աշակերտը

- կնշի գրողի կենսագրական որոշ մանրամասներ ու փաստեր,
- կընդհանրացնի և հակիրճ կձևակերպի ստեղծագործության հիմնական գաղափարը,
- կապեր կստեղծի հեղինակի կյանքի, իրականության և ստեղծագործության մեջ նկարագրված իրադարձությունների միջև,
- կհամեմատի իր և ստեղծագործության մեջ արտահայտված հույզերն ու ապրումները,
- կտարբերակի ստեղծագործության ոճական առանձնահատկությունները,
- կմեկնաբանի ստեղծագործության լեզվաոճական համակարգի առանձնահատկությունները,
- կգնահատի հեղինակի մտքերի զարգացման ընթացքը, լեզուն, ոճը,

- կհարստացնի բառապաշարը,
- յուրովի կվերարտադրի ստեղծագործությունը( պատմելով, երկխոսությամբ, խորհրդանիշ-պատկերներ ստեղծելով, հիմնական գործողությունների պլանը կազմելով),
- կկատարի ստեղծագործական հավելումներ(հորինել նոր ավարտ, հարցեր տալ հեղինակին, գրել խորհուրդ «Վերք Հայաստանի» վեպը կարդացողին),
- կդրսևորի սոցիալական հմտություններ՝ համբերատարություն, դիմացինի խոսքն ուշադիր լսելու, կարծիքը հարգելու, դիպուկ հարցեր ձևակերպելու կարողություն, քննարկումներին մասնակցելու, լսարանի առջև ելույթ ունենալու ունակություն,
- զուգահեռ կանցկացնի ստեղծագործության հիմնական գաղափարի և իրականության ու կյանքի տարբեր դրսևորումների, երևույթների ու արժեքների հետ,
- կգնահատի և կարժևորի մարդասիրությունը, բարոյական բարձր հատկանիշներն ու արժեքները

## Ուսուցիչը

- կպարզաբանի առաջաբանի դերը ստեղծագործության մեջ և <<Հառաջաբանի>> առաջադրած խնդիրները,
- կբացահայտի <<Հառաջաբանի>> դերը վեպի ուսուցման գործում,
- կզարգացնի աշակերտների վերլուծական կարողությունները <<Հառաջաբանի>>՝ որպես հայ նոր գրականության ծրագիր շուրջ,
- կընդլայնի աշակերտների գիտելիքները գրաբարի և աշխարհաբարի՝ որպես հայերենի զարգացման փուլերի վերաբերյալ,
- կներկայացնի տեղեկություններ <<Վերք Հայաստանի>> վեպի՝ որպես հայ նոր գրականության հիմնաքարի՝ առաջին վեպի մասին,
- աշակերտներին կնպատակաուղղի փնտրելու առնչություններ(խորենացի, Շնորհալի, Նարեկացի, Հյուզո, Ռաֆֆի)

## Դասի ընթացքը

### I Խթանում

#### 1. Դասը նախապատրաստող հարցեր

- Ե՞րբ է գրվել <<Վերք Հայաստանի>> վեպը:
- Ե՞րբ է լույս տեսել <<Վերք Հայաստանի>> վեպը:
- Քանի՞ մասից է բաղկացած <<Վերք Հայաստանի>> վեպը:
- Ինչի՞ մասին է <<Հառաջաբանը>> և ի՞նչ հարցեր է քննում:
- Ի՞նչ է գրապայքարը:
- Ինչպիսի՞ կապ է ստեղծում Խ. Աբովյանը «Հառաջաբան»-ում ներկայի և անցյալի միջև:

Այս մեթոդները և հարցերը ակտիվացնում են աշակերտներին. նրանք ի մի են բերում իրենց գիտելիքները կարճ ձևակերպումներով, հանդես են բերում հանդուրժողականություն, ինչպես նաև ուշադրություն ձևակերպումները չկրկնելու համար:

Քարտային աշխատանք է տրվում 3-5 աշակերտի: Այդ ընթացքում անցկացվում է Մտագրողը ժամանակ շահելու համար:

## 2. Մտագրոհ<<Հառաջաբան>>

- հայ նոր գրականության ծրագիր
- <<Վերք Հայաստանի>> վեպի մաս
- գրապայքարի սկիզբ
- լեզվի, բովանդակության և կերպարի խնդիրներ
- մտերմիկ գրույց ընթերցողի և ազգի հետ
- Աբովյանի ազգասիրության և հայրենասիրության բացահայտում
- Կլասիցիստ գրողի ստեղծած կերպար
- Պուշկինը որպես ռուս նոր գրականության հիմնադիր
- Առաջաբաններ գրել են Ռաֆֆին և Հյուզոն

## II Իմաստի ընկալում

**Քարտային աշխատանք տրվում է երեք աշակերտի, որոնք գրատախտակին գրում են հանձնարարությունները, իսկ այդ ընթացքում ուսուցիչն անցկացնում է Մտագրոհ և Քարտեզագրում: Ավարտելուց հետո ուսուցիչը ստուգում է: Քարտային աշխատանք**

- Հայերենի զարգացման շրջանները (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) և տեղեկություններ դրանց մասին:
- <<Հառաջաբանում>> արտահայտված զգացումներ և զգացմունքներ(ազգասիրություն, ազգապահպանություն, հպարտություն, ավստասանք, սեր(ազգի, ընթերցողի և մանուկների հանդեպ), կասկած, ոգևորություն, չհասկացված լինելու վախ և այլն)
- <<Հառաջաբանում>> գործածված հատուկ անուններ(Կրեսոս, Կյուրոս, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ, Հայկ, Նոյ, Հոմեր, Հորացիոս, Սոֆոկլես, Գրիգոր Թարխանով, Ռոպեն Սոն, Եվրոպա, Ասիա, Էջմիածին, Հայաստան, Պղնձե քաղաք, Մասիս, Քուռ, Լիդիա)
- Աբովյանին բնութագրող բառեր, բառակապակցություններ(ազգասեր, հայրենասեր, գեղարվեստասեր, դեմոկրատ, բռնությունը ատող, զգացմունքային, ոգևորվող մարդ, ազգապահպանության հարցերով մտահոգվող մտավորական, գրաբարի փայլուն իմացություն, չհասկացված լինելու վախ, պատմական անցյալի հանդեպ հպարտության զգացում:)

### (Բլից հարցեր)

## 3. Ընտրովի ընթերցանություն(նախօրոք կարելի էր տալ նաև որպես տնային աշխատանք)

Կարդալ

- լեզվին վերաբերող հատվածներ(հատվածները կարդալուց հետո տրված հարցերի միջոցով կարելի է ամփոփել տվյալ խնդիրը)

**ա)Ո՞րն է կարևոր՝ լեզուն, թե բովանդակությունը:**

**բ)Ի՞նչ լեզվով գրեց Աբովյանը <<Վերք Հայաստանի>> վեպը:**

**գ) Սայաթ-Նովան ևս գրել է աշխարհաբարով. Ինչու՞ նա չի համարվում հայ նոր գրականության հիմնադիրը:**

**դ)**

- բովանդակությանը վերաբերող հատվածներ
- կերպարը բնութագրող տողեր(Վերջը իմ ջիվան Աղասին...)

#### 4. Քարտեզագրել «Հառաջաբանի» խնդիրները

Մինչ աշակերտները կքարտեզագրեն «Հառաջաբանի» խնդիրները (գրատախտակին), լրացուցիչ առաջադրանք(Կլասիցիզմ, Լուսավորականություն) ունեցող աշակերտները կներկայացնեն այն: Այս ամենից հետո պետք է զարգացնել աշակերտների պատմողական ունակությունները տեքստի ընտրովի և ամբողջական պատմելու միջոցով:

#### 5. Պատմել Խաչատուր Աբովյանի անձնական կյանքը ներկայացնող դրվագներ (<<Հառաջաբանից>>):

- այլաբանական պատկերը
- <<Էս միջոցումը... մի քանի երեխեք>>(Էջ87)
- <<Գնացի Նեմեցի Կոլոնիեն>>(Էջ89)
- <<Մեկ բարեկենդանի աշակերտներիս բաց թողի>>(Էջ91)
- <<Մեկ երես բան չէի գրել, երբ մանկության բարեկամ Աղաֆոն Սմբատյանը ներս մտավ>>(Էջ91)
- <<Սիաթի տասն էր առավոտի>>(Էջ 91,92)

Դասի բաղադրիչ մաս է կազմում նաև աշակերտների պատկերավոր մտածողության զարգացումը և բառապաշարի հարստացումը: Այդ նպատակին է ուղղված <<Հառաջաբանից>> փոխաբերությունների, համեմատությունների դուրսգրումը:

### III Կշռադասում

#### 6. Դուրս գրել

- փոխաբերություններն ու համեմատությունները

#### 8. Հեղինակի աթոռ

- Ինչու՞ վեպում Աղասին չի սպանում Հասան խանին:
- Չէի՞ք վախենում, որ առաջինն էիք գրում աշխարհաբար:
- Ո՞վ Ձեզ օգնեց, որ սկսեցիք գրել:
- Ինչու՞ են այսօր հայ երեխաները դժվարությամբ կարդում <<Վերք Հայաստանի>> վեպը:
- Դուք՞որպես ուսուցիչ, ինչպե՞ս եք վարվել չսովորող աշակերտի հետ:
- Ի՞նչ կարծիք ունեք «Վերք Հայաստանի» վեպի՝ գրական արևելահայերենի վերածած տարբերակի վերաբերյալ:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք չկարդացող աշակերտին:

#### 9. Տնային աշխատանք

- «Հառաջաբան»-ից դուրս գրել հարցական նախադասությունները, առածները և դարձվածքները:
- Դասագրքից - ԼԱ 1, 3 (էջ 97, 98)

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խ. Աբովյան «Վերք Հայաստանի»
2. Խ. Աբովյան «Վերք Հայաստանի» (արդի հայերեն փոխադրումը՝ Արսեն Սարգսյան-2009թ.)
3. Ս. Աղաբաբյան «Դասականներ և ժամանակակիցներ» - 1986թ. (էջ 3-14)
4. Հ. Մուրադյան «Խաչատուր Աբովյան»-1963թ.
5. Ն. Մուրադյան «Աբովյանի պոետիկան» 1979թ.
6. Օ. Մելքոնյան «Ուշագրավ վկայություն Խ. Աբովյանի առեղծվածային անհայտացման մասին» («Կրթություն» թերթ, 7(116), 2003թ.)
7. Էդ. Ջրբաշյան «Գրականության տեսություն» - 1972թ.
8. Հովհ. Թումանյան «Քաջերի կյանքից»
9. Ա. Արնաուդյան և ուրիշներ «Ձեռնարկ ուսուցիչների համար» 2005թ.
10. Մ. Նալբանդյան «Կրիտիկա՝ Սոս և Վարդիթերի»
11. Википедия - Классицизм